«Ռուս-Հայկական համալսարան» բարձրագույն կրթության միջպետական կրթական կազմակերպություն

Հաստատում եմ՝
Իրավունքի ինստիտուտի տնօրեն
Քալաշյան Մ.Ա.
«23» հունիսի 2026 թ.

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Իրավունքի տեսության և Սահմանադրական իրավունքի

Հեղինակ՝ ի.գ.թ., ավագ դասախոս Սարգսյան Ա.Գ.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Իրավաբանական էթիկա

Մասնագիտություն՝ 042101.00.6 «Իրավագիտություն»

Կրթական ծրագիր՝ 042101.01.6 «Իրավագիտություն»

Բովանդակություն

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

1.1. ՏՎՅԱԼ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.....3

1.2. ԾԱՎԱԼԸ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԿՐԵԴԻՏՆԵՐՈՎ և ԺԱՄԵՐՈՎ 3

1.3. ԱՌԱՐԿԱՅԻ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ (ՈՒՂՂՈՒԹՅԱՆ) ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ԱՅԼ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՀԵՏ

1.4. ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.....3

2. ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ 4

2.1. ՆՊԱՏԱԿԸ և ԽՆԴԻՐՆԵՐԸ 4

2.2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՕԲՅԵԿՏԸ և ԱՌԱՐԿԱՆ 4

2.3. ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ և ՄԵԹՈԴՆԵՐԸ.....5

2.4.ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՇԽԱՏԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՇԽՈՒՄ ԸՍՏ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ (ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԺԱՄԵՐՈՎ).....5

2.5. ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾԱՎԱԼԻ ԲԱՇԽՈՒՄ (ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԺԱՄԵՐՈՎ) ԸՍՏ ԹԵՄԱՆԵՐԻ և ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ.....6

2.6. ԴԱՍԸՆԹԱՑԻ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ.....7

3. ՏԵՍԱԿԱՆ ԲԼՈԿ 8

3.1. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՆՅՈՒԹԵՐԸ.....8

3.1.1. Դասագիրք(եր) 8

3.1.2. Իրավական ակտեր.....11

3.1.3. Էլեկտրոնային ռեսուրսներ.....11

4. ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ և ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.....11

4.1.1. Վերլուծական կարողություններ..... 11

4.1.2. Իրավական փաստարկում 12

4.1.3. Հստակություն և ընկալելիություն 12

4.1.4. Համակարգվածություն և կառուցվածքայնություն 13

4.2. Ստուգողական առաջադրանքների և գիտելիքների գնահատման համար անհրաժեշտ այլ նյութերի տիպային օրինակներ.....13

4.2.1. Սեմինար պարապմունքների քննարկման հարցեր.....13

4.2.2. Իրավիճակային խնդիրների օրինակներ.....15

4.3. ՄԵԹՈԴԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ, ՈՐՈՆՔ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ 16

4.3.1. Գիտելիքների ընթացիկ հսկողության ձևերը 15

4.3.2. Ատեստավորման ձևը (ստուգարք, քննություն).....15

4.3.3. Գնահատման ընթացակարգը 16

4.3.4. Գնահատման չափանիշներ.....16

4.3.5. Ուսանողների նախապատրաստման առաջարկություններ.....16

1. Ներածություն

1.1. Տվյալ առարկայի բովանդակության համառոտ նկարագրությունը

«Իրավաբանական էթիկա» դասընթացը պատկանում է մարդասիրական, սոցիալական և տնտեսական ցիկլի բազային մասին: «Իրավաբանական էթիկա» առարկան իրավաբանական գիտությունների ինքնուրույն դասընթաց է, որի նպատակը իրավաբանի մասնագիտական էթիկայի հիմնախնդիրների համակարգված ներկայացումն է: Այս դասընթացի տիրապետումը զարգացնում է իրավագիտակցությունը և նպաստում է ապագա իրավաբանների բարոյական ու մասնագիտական զարգացմանը: «Իրավաբանական էթիկա» դասընթացը օգնում է ուսանողին պատկերացումներ ձևավորել էթիկայի համընդհանուր սկզբունքների և էթիկական չափանիշների մասին, որոնց համապատասխան կառուցվում է իրավաբանի մասնագիտական էթիկան կազմող բարոյական և էթիկական պահանջների համակարգը:

Դասընթացի նպատակը պրակտիկ իրավաբանների կողմից իրենց հետագա մասնագիտական գործունեությունն իրավաբանի էթիկայի պահանջներին համապատասխան իրականացնելու հնարավորության ընձեռումն է: Դասընթացի շրջանակներում կքննարկվեն ինչպես տեսական հարցեր, այնպես էլ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց, մասնավորապես՝ քննիչների, դատախազների և դատավորների էթիկային վերաբերող բազմաթիվ պրակտիկ իրավիճակներ:

1.2. Ծավալը ակադեմիական կրեդիտներով և ժամերով

Առարկայի ծավալը՝ 72 ժամ, կրեդիտ՝ «2» ECTS:

1.3. Առարկայի փոխկապակցվածությունը մասնագիտության (ուղղության) ուսումնական պլանի այլ առարկաների հետ

«Իրավաբանական էթիկա» դասընթացի շրջանակներում, առավել արդյունավետ կրթական վերջնարդյունքների ձևավորման համար, ուսանողներին անհրաժեշտ են բազային գիտելիքներ իրավագիտությունից, պետության և իրավունքի տեսությունից, սահմանադրական իրավունքից, հարակից մի շարք այլ իրավունքի ճյուղեր ուսումնասիրողառարկաներից, ինչպես նաև փիլիսոփայության, իրավունքի փիլիսոփայության, բարոյագիտության ոլորտներից:

1.4. Կրթական վերջնարդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.

իմանա՝

ընդհանրական իմացական հմտությունները՝

- Իրավաբանի մասնագիտական էթիկայի ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական հիմնական ակտերը.
- Քննիչի, դատախազի, դատավորի վարքագծի կանոնների առանձնահատկությունները:

կարողանա՝

գործնական կիրառման հմտությունները՝

- Գործնականում կիրառել ձեռք բերված գիտելիքները.
- Վերլուծել և տալ քննիչի, դատախազի կամ դատավորի գործունեության բարոյական կողմերի իրավական գնահատական:

ունակ լինի՝

ինքնուրույնությունը և պատասխանատվությունը՝

- Ինքնուրույն յուրացնել և վերլուծել վերաբերելի նորմատիվ իրավական ակտերի բովանդակությունը.
- Գնահատել իրավաբանի մասնագիտական էթիկայի հետ կապված պրակտիկ իրավիճակները:

2. Առարկայական ծրագիրը

2.1. Նպատակը և խնդիրները

Դասընթացի հիմնական խնդիրներն են՝

- օգնել ուսանողներին հասկանալ վերաբերելի մի շարք հասկացությունների առանձնահատկությունները, գործնականում այդ կապակցությամբ առաջացող խնդիրները.
- ուսումնասիրել քննիչի, դատախազի և դատավորի վարքագծի կանոնները.
- պատկերացում կազմել պրակտիկ իրավաբանի մասնագիտական էթիկայի ընդհանուր կանոնների մասին:

Դասընթացի նպատակն է ուսանողների կողմից իրավաբանական էթիկայի բազային գիտելիքների ձեռքբերումը:

2.2. Դասընթացի օբյեկտը և առարկան

«Իրավաբանական էթիկա» դասընթացի ուսումնասիրության օբյեկտ է հանդիսանում քննիչի, դատախազի և դատավորի մասնագիտական էթիկան:

«Իրավաբանական էթիկա» դասընթացի առարկան՝ իրավաբանի մասնագիտական էթիկայի առանձնահատկություններն են:

2.3. Դասավանդման եղանակները և մեթոդները:

«Իրավաբանական էթիկա» դասընթացն անցկացվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Գործնական պարապմունքների նպատակն է օգնել ուսանողներին ուսումնասիրել դասընթացի կարևորագույն խնդիրները, խորացնել և համակարգել ուսանողների գիտելիքները տվյալ ոլորտում:

«Իրավաբանական էթիկա» դասընթացն ուսումնասիրելիս կարևոր դեր է խաղում հատկապես ուսանողների ինքնուրույն աշխատանքը՝ խնդիրների և իրավիճակային հարցերի քննարկման շրջանակներում:

«Իրավաբանական էթիկա» դասընթացի ընթացքում կիրառվում են բացատրական, տեղեկատվական, գործնական, համեմատական, հետազոտման և մասնակի որոնման մեթոդները:

2.4. Դասընթացի աշխատատարության բաշխումն ըստ ուսումնական աշխատանքի տեսակների (ակադեմիական ժամերով)

Դասընթացը ներառված է «Ընդհանուր դասընթացների կրթաբլոկում»՝ 2 ակադեմիական կրեդիտ (72 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 16 ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 4-րդ ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում:

Ուսումնական աշխատանքի տեսակները	Ընդամենը, ակադ. ժամեր
1.Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝	72
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	32
1.1.1.Դասախոսություններ	16
1.1.2.Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	16
1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ	
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	40
1.2.1. Քննություններին նախապատրաստում	
1.2.2. Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝(նշել)	
1.2.2.1.Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	
1.2.2.2.Էսսե և ռեֆերատներ	

Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	Ստուգարք

2.5. Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	Ընդամենը	Դասախոս ու-թյուններ	Գործնական / սեմինար պարապմունքներ
1	2=3+4	3	4
Թեմա 1.«Էթիկա», «իրավաբանական էթիկա», «վարքագծի կանոններ» և «կարգապահական կանոններ» հասկացությունների բովանդակությունը. Հանրային պաշտոններ զբաղեցնող անձանց և քննչական ապարատի աշխատակիցների վարքագծի ընդհանուր կանոնները	2	1	1
Թեմա 2. ՀՀ քննչական կոմիտեի ներքին կարգապահական կանոնները. ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը	2	1	1
Թեմա 3. Դատախազի կարգավիճակի առանձնահատկությունները, դատախազի վարքագծի ընդհանուր կանոնները և դրանից բխող պահանջները Դատախազի վարքագծի կանոնները պաշտոնեական և արտապաշտոնեական հարաբերություններում	2	1	1

Թեմա 4. Դատախազի վարքագծի կանոնների խախտման համար պատասխանատվությունը. ՀՀ գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովը	4	2	2
Թեմա 5. Դատավորների էթիկայի կանոններ և վարքագծի կանոններ հասկացությունները. Դատավորի վարքագծի և էթիկայի միջազգային չափորոշիչները	4	2	2
Թեմա 6. Ներպետական օրենսդրությունը. «Դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքը, ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի որոշումները դատավորների վարքագծի կանոնների վերաբերյալ. Էթիկայի և վարքագծի կանոնների խախտումների հետևանքները	4	2	2
Թեմա 7. Բարձրագույն դատական խորհուրդը, դատավորների էթիկայի և վարքագծի հարցերով լիազորությունները	8	4	4
Թեմա 8. Դատավորների կարգապահական պատասխանատվության հիմնական սկզբունքները և առանձնահատկությունները	6	3	3

Ընդամենը	32	16	16

2.6. ԴԱՍԸՆԹԱՑԻ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Թեմա 1. «Էթիկա», «իրավաբանական էթիկա», «վարքագծի կանոններ» և «կարգապահական կանոններ» հասկացությունների բովանդակությունը. Հանրային պաշտոններ զբաղեցնող անձանց և քննչական ապարատի աշխատակիցների վարքագծի ընդհանուր կանոնները

«Էթիկա» հասկացությունը՝ որպես փիլիսոփայական կատեգորի և դրա բովանդակությունը իրավագիտությունում. «Վարքագծի կանոններ» և «կարգապահական կանոններ» հասկացությունները, դրանց բովանդակությունը և

օրենսդրական ամրագրումը. Հանրային պաշտոններ զբաղեցնող անձանց ընդհանուր (տիպային) կանոնները «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի համատեքստում. Քննիչների կարգավիճակի առանձնահատկությունները, մասնագիտական էթիկան, քննիչի գործունեության նկատմամբ ներկայացվող բարոյական պահանջները

Թեմա 2. ՀՀ քննչական կոմիտեի ներքին կարգապահական կանոնները. ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը

ՀՀ քննչական կոմիտեի նախագահի հրամանով սահմանված՝ ՀՀ քննչական կոմիտեի աշխատողների ներքին կարգապահական կանոնները, դրանց խախտման դեպքում վրա հասնող պատասխանատվությունը. Քննիչների վարքագծի կանոնների խախտման պրակտիկ իրավիճակներ. ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի գործունեությունը, կայացված ակտերը:

Թեմա 3. Դատախազի կարգավիճակի առանձնահատկությունները, դատախազի վարքագծի ընդհանուր կանոնները և դրանից բխող պահանջները. Դատախազի վարքագծի կանոնները պաշտոնեական և արտապաշտոնեական հարաբերություններում

Դատախազի կարգավիճակը, դրա առանձնահատկությունները, դատախազական էթիկան. Դատախազի գործունեության բարոյական հիմունքները. Դատախազի վարքագծի ընդհանուր կանոնները և դրանցից բխող պահանջները՝ սահմանված օրենքով և գլխավոր դատախազի հրամանով. Դատախազի վարքագծի կանոնները պաշտոնեական հարաբերություններում. Դատախազի վարքագծի կանոնները արտապաշտոնեական հարաբերություններում:

Թեմա 4. Դատախազի վարքագծի կանոնների խախտման համար պատասխանատվությունը. ՀՀ գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովը

Պատասխանատվությունը դատախազի վարքագծի կանոնների խախտման դեպքում, դատախազի վարքագծի կանոնների խախտման պրակտիկ իրավիճակներ. Գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովի գործունեությունը, կայացրած ակտերը:

Թեմա 5. Դատավորներիէթիկայի կանոններ և վարքագծի կանոններ հասկացությունները. Դատավորի վարքագծի և էթիկայի միջազգային չափորոշիչները, Դատական էթիկա, բովանդակությունը և նշանակությունը.

Արդարադատության իրականացման բարոյական հիմունքները. Բարոյական պահանջները դատական իշխանության գործունեության նկատմամբ, դատավորների վարքագծի Բանգալորյան սկզբունքները և միջազգային այլ չափորոշիչներ:

Թեմա 6. Ներպետական օրենսդրությունը. «Դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքը, ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի որոշումները դատավորների վարքագծի կանոնների վերաբերյալ. Էթիկայի և վարքագծի կանոնների խախտումների հետևանքները

Դատավորների վարքագծի կանոնների վերաբերյալ ազգային օրենսդրությունը, ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի որոշումներում ամրագրված վարքագծի կանոնները:

Թեմա 7. Բարձրագույն դատական խորհուրդը, դատավորների էթիկայի և վարքագծի հարցերով լիազորությունները

ՀՀ բարձրագույն դատական խորհուրդը, կազմը, լիազորությունները. Դատավորների էթիկայի, վարքագծի և կարգապահական պատասխանատվության հարցերով լիազորությունների առանձնահատկությունները, կայացրած ակտերը:

Թեմա 8. Դատավորների կարգապահական պատասխանատվության հիմնական սկզբունքները և առանձնահատկությունները

Դատավորների կարգապահական պատասխանատվության հասկացությունը, հիմնական սկզբունքները և դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգի առանձնահատկությունները

3. Տեսական բլոկ

3.1. Դասընթացի տեսական մասի նյութերը

3.1.1. Դասագիրք(եր)

1. Порубов А.Н., Порубов Н.И. Профессиональная этика юриста. Учебник, Минск: Выш. шк., 2012 г.
2. Аминов И.И., Дедюхин К.Г., Зинатулин З.З., Усиевич А.Р. “Профессиональная этика юриста” - 2010 г.
3. Братусь Б.С. “Психология и этика ” - АСТ- 2008 г.
4. Кобликов А.С. “Профессиональная этика юриста” - 2005 г.- учебник для вузов. Изд. Норма
5. Васильева Г. - “Профессиональная этика юриста” - Ч. 2005 г.
6. Дубов Г. - “Этика сотрудников правоохранительных органов” -Щит-М.- 2002
7. Красникова Е.А.-“Этика и психология проф. деятельности ”-Форум-Инфра- М 2004 г.

8.Маслеева А.Г.- “Профессиональная этика юриста” -Екатеринбург- 2006 г.

9.Порубов Н.И., Порубов А.Н.- “Профессиональная этика юриста” - 2003 г.

10. Халиулина В.П. - “Профессиональная этика юриста “ - М.- 2004 г.

11. Даниелян Е.Р. “Независимость, неподкупность, эффективность, прозрачность, компетентность (Современные вызовы судебной реформы на Южном Кавказе) - (Датакан ишханутюн - 4/141 -2011)

12. Кони А. Ф. Нравственные начала в уголовном процессе (Общие черты судебной этики)

13. Собрание сочинений, 4.М.,1968.Т.4.

14. Ватман Д.П. Адвокатская этика. - М.: Юридическая литература,

15. Горский, Кокорев, Котов. Судебная этика. М., 1973.

16. Леоненко В.В. Профессиональная этика участников уголовного судопроизводства. Киев, 1981 г.

17. Кокорев Л. Д., Котов Д. П. Этика уголовного процесса. Воронеж, 1993 г.

18. Моисеева Т. В. Объективность и беспристрастность суда первой инстанции. М.,

19. Панкратов В. В. Комментарий к Кодексу судейской этики. М., 2005.

20.Пашин С. Судейская этика. М.

21. Порубов Н. И., Порубов А. Н. Профессиональная этика юриста. Минск, 2003.

22.Этика судьи / Ги Де Вель, Н. В. Радутная, Пьер Трюш и др. М.,

23.Емузов А. С. Усмотрение судьи: правовые и нравственные проблемы // Рос.судья. 2005. № 6.

24.Клеандров М. И. Азартные игры и арбитражный судья // Рос. судья. 2003. №11.

25.Матеров Н. Как улучшить подбор кандидатов на должности судей // Рос. юс-тиция. 2004. № 4.

26.Поляков С. Равнодушие судебной системы - оборотная сторона ее абсолютной независимости // Рос. юстиция. 2003. № 6.

27.Судейская этика. Поведение судей в суде и вне суда. Ответственность судей в России // Рос. судья. 2003. № 11.

28. Сумароков И. Судебный стресс // Рос. юстиция. 2003. № 12.

29.Фоков А. В. Судейская этика по делам о праве собственности // Рос. судья. 2003.

30. Фоков А. В. Судейская этика по делам о праве собственности // Рос. судья.2003.

3.1.2. Իրավական ակտեր

1. Դատավորների վարքագծի Բանգալորյան սկզբունքներ (ընդունված՝ 2002թ.)
2. ՀՀ Սահմանադրություն (ընդունված՝ 05.07.1995թ., 06.12.2015թ. և 22.06.2020թ. փոփոխություններով)
3. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենք (ընդունված՝ 17.01.2018թ.)
4. «Դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենք (ընդունված՝ 07.02.2018թ.)
5. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք (ընդունված՝ 23.03.2018թ.)
6. «Դատախազության մասին» ՀՀ օրենք (ընդունված՝ 17.11.2017թ.)
7. «Քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենք (ընդունված՝ 19.05.2014թ.)

3.1.3. Էլեկտրոնային ռեսուրսներ

1. https://arlis.am
2. https://cpcarmenia.am
3. https://old.arlis.am
4. https://court.am
5. https://concourt.am
6. https://investigative.am
7. https://prosecutor.am

4. Կարողունակության գնահատման ցուցանիշները և չափանիշները

4.1.1. Վերլուծական կարողություններ

A (88–100 միավոր) «Գերազանց». Ուսանողն առանձնացնում է խնդրի բոլոր էական կողմերը, իրականացնում է ինքնուրույն իրավական վերլուծություն, համեմատում է դոկտրինալ մոտեցումները պրակտիկ խնդիրների հետ:

B (76–87 միավոր) «Շատ լավ». Ուսանողը բացահայտում է խնդրի հիմնական կողմերը, վերլուծությունն իրականացնում է ինքնուրույն եզրահանգումների առանձին տարրերով. ընդհանուր առմամբ ճիշտ է ընկալում թեմաների էությունը:

C (64–75 միավոր) «Լավ». Ուսանողը ճիշտ է որոշում հիմնական կատեգորիաները, սակայն վերլուծությունը կրում է նկարագրական բնույթ. թույլ է տալիս առանձին անճշտություններ:

D (52–63 միավոր) «Բավարար». Ուսանողը վերարտադրում է հիմնական մոտեցումները, սակայն վերլուծությունը մակերեսային է:

E (40–51 միավոր) «Բավարար սահմանային». Ուսանողը տալիս է երևույթների ընդհանուր բնութագիր, սակայն ինքնուրույն վերլուծություն չի իրականացնում. թույլ է տալիս էական սխալներ:

FX (20–39 միավոր) «Անբավարար». Ուսանողը չի կարողանում առանձնացնել խնդրի էական կողմերը, վերլուծությունը բացակայում է կամ կրում է խիստ մակերեսային բնույթ:

F (0–19 միավոր) «Անբավարար». Վերլուծությունն ամբողջությամբ բացակայում է. ուսանողը չի կարող առանձնացնել առարկայի հիմնական կատեգորիաները:

4.1.2. Իրավական փաստարկում

A (88–100 միավոր) «Գերազանց». Ուսանողը ներկայացնում է մանրամասն իրավական փաստարկում՝ հղումներով դոկտրինին, նորմատիվ ակտերին (ՀՀ Սահմանադրություն, ՀՀ օրենքներ) և պրակտիկայի օրինակներին:

B (76–87 միավոր) «Շատ լավ». Փաստարկումն ընդհանուր առմամբ հետևողական է, առկա են առանձին հղումներ իրավունքի նորմերին (ՀՀ Սահմանադրություն, օրենքներ) և գիտական մոտեցումներին. բերում է պրակտիկայի օրինակներ:

C (64–75 միավոր) «Լավ». Փաստարկումը մասնատված է, դոկտրինին և նորմատիվ ակտերին հղումներ կան, սակայն ոչ միշտ են համապատասխան. օրինակները միշտ չէ, որ արդիական են:

D (52–63 միավոր) «Բավարար». Փաստարկումը թույլ է, դոկտրինին հղումները բացակայում են կամ թերի են. նորմատիվ ակտերին հղումները եզակի են:

E (40–51 միավոր) «Բավարար սահմանային». Փաստարկումը կրում է ընդհանուր բնույթ՝ առանց կոնկրետ նորմերի կամ դոկտրինի հղումների:

FX (20–39 միավոր) «Անբավարար». Փաստարկումը բացակայում է կամ չի համապատասխանում առաջադրված հարցին. ուսանողը չի կարող հիմնավորել սեփական դիրքորոշումը:

F (0–19 միավոր) «Անբավարար». Փաստարկումն ամբողջությամբ բացակայում է:

4.1.3. Հստակություն և ընկալելիություն

A (88–100 միավոր) «Գերազանց». Պատասխանը կառուցված է, օգտագործված են ճշգրիտ իրավական հասկացություններ, եզրակացությունները ձևակերպված են պարզ:

B (76–87 միավոր) «Շատ լավ». Պատասխանը բավականաչափ հասկանալի է, տերմինաբանությունն առավելապես օգտագործվում է ճիշտ. առանձին հասկացություններ կիրառվում են ոչ ճշգրիտ:

C (64–75 միավոր) «Լավ». Պատասխանն ընդհանուր է, տերմինաբանությունը միշտ չէ, որ ճշգրիտ է, թույլ են տրվում սխալներ հատուկ տերմինների գործածության մեջ:

D (52–63 միավոր) «Բավարար». Պատասխանն անհետևողական է, իրավական տերմինաբանությունն օգտագործվում է սխալ կամ բացակայում է:

E (40–51 միավոր) «Բավարար սահմանային». Պատասխանը շփոթեցնող է, տերմինաբանությունը՝ սխալ:

FX (20–39 միավոր) «Անբավարար». Պատասխանն անհասկանալի է, տերմինները չեն օգտագործվում:

F (0–19 միավոր) «Անբավարար». Պատասխանը բացակայում է կամ ամբողջությամբ սխալ է:

4.1.4. Համակարգվածություն և կառուցվածքայնություն

A (88–100 միավոր) «Գերազանց». Պատասխանը տրամաբանորեն կառուցված է, առանձնացված են ներածությունը, հիմնական մասը, եզրահանգումները:

B (76–87 միավոր) «Շատ լավ». Պատասխանն ընդհանուր առմամբ տրամաբանական է, կառուցվածքը մասամբ պահպանված է. եզրակացություններն առկա են, սակայն բավարար մանրամասն չեն:

C (64–75 միավոր) «Լավ». Խախտված է շարադրման տրամաբանությունը, եզրակացությունները բացակայում են կամ չեն համապատասխանում բովանդակությանը. շարադրանքն անհամակարգ է:

D (52–63 միավոր) «Բավարար». Պատասխանն անհամակարգ է, կառուցվածքը բացակայում է. շարադրանքը քաոսային է, չի նկատվում հասկացությունների միջև կապ:

E (40–51 միավոր) «Բավարար սահմանային». Կառուցվածքը գրեթե բացակայում է:

FX (20–39 միավոր) «Անբավարար». Կառուցվածքը բացակայում է կամ խիստ անընկալելի է:

F (0–19 միավոր) «Անբավարար». Կառուցվածքը բացակայում է:

4.2. Ստուգողական առաջադրանքների և գիտելիքների գնահատման համար անհրաժեշտ այլ նյութերի տիպային օրինակներ

4.2.1. Սեմինար պարապմունքների քննարկման հարցեր

1. «Էթիկա» հասկացությունը՝ որպես փիլիսոփայական կատեգորիա և դրա բովանդակությունը իրավագիտության մեջ
2. «Վարքագծի կանոններ» և «կարգապահական կանոններ» հասկացությունները, դրանց բովանդակությունը և օրենսդրական կարգավորումը
3. Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց ընդհանուր (տիպային) վարքագծի կանոնները
4. Քննիչների կարգավիճակը, դրա առանձնահատկությունները
5. Քննչական էթիկա. Քննիչի գործունեության բարոյական պահանջները
6. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ներքին կարգապահական կանոնները

7. Քննչական կոմիտեի ներքին կարգապահական կանոնները խախտելու համար նախատեսված պատասխանատվությունը
8. Քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի գործունեությունը
9. Դատախազի կարգավիճակը, դրա առանձնահատկությունները
10. Դատախազի էթիկա. Դատախազի գործունեության բարոյական սկզբունքները
11. Դատախազի վարքագծի ընդհանուր կանոնները և դրանցից բխող պահանջները
12. Դատախազի վարքագծի կանոնները պաշտոնեական հարաբերություններում
13. Դատախազի վարքագծի կանոնները արտապաշտոնեական հարաբերություններում
14. Դատախազի վարքագծի կանոնները խախտելու համար նախատեսված պատասխանատվությունը
15. Գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովի գործունեությունը
16. Դատական էթիկան, դրա բովանդակությունն ու նշանակությունը
17. Արդարադատության իրականացման բարոյական սկզբունքները. Դատական իշխանության գործունեության բարոյական պահանջները
18. Դատական նիստը նախագահող դատավորի դերը վարույթի էթիկական կողմն ապահովելու գործում
19. Դատական բանավեճի էթիկա. Դատական բանավեճերի բարոյական նշանակությունը
20. Դատավորի վարքագծի Բանգալորյան սկզբունքները
21. Անկախության և օբյեկտիվության սկզբունքները
22. Ազնվության և հավասարության սկզբունքները
23. Համապատասխանությունը էթիկական չափանիշներին
24. Կոմպետենտության և աշխատասիրության սկզբունքները
25. Հայաստանի Հանրապետության դատավորների էթիկայի և վարքագծի ընդհանուր կանոնները
26. Դատավորների վարքագծի կանոնները պաշտոնեական հարաբերություններում
27. Դատավորների վարքագծի կանոնները արտապաշտոնական հարաբերություններում

4.2.2. Իրավիճակային խնդիրների օրինակներ

Իրավիճակային խնդրի օրինակ թիվ 1

ՀՀ քննչական կոմիտեի քննիչն իր նկատմամբ իրականացվող ծառայողական քննության շրջանակներում բացատրություն տալու նպատակով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչություն է ներկայացել ոչ պատշաճ արտաքին տեսքով՝ կրելով մուգ կապույտ գույնի միատոն, ոչ դասական, ջինսե տաբատ և նույն գույնի վերնաշապիկ:

Հետագայում վերջինս բացատրություն է տվել այն մասին, որ նշված օրը համապատասխան վարչություն ներկայացել է բժշկի մոտից, ուստի Կոմիտեի համազգեստով կամ քաղաքացիական դասական հագուստով չի եղել, քանի որ հետազոտություններ պետք է անցներ և նախկինում եղել են դեպքեր, երբ իրականացվող հետազոտությունների ժամանակ իր հագուստը բժշկական նյութերի օգտագործման պատճառով վնասվել է և դարձել է կրման համար ոչ պիտանի:

- Քննիչի արարքում առկա են արդյոք կարգապահական խախտման հատկանիշներ, թե՝ ոչ:

Իրավիճակային խնդրի օրինակ թիվ 2

Դատախազ Վ.Վ.-ին տրամադրվել է ամենամյա հերթական արձակուրդ՝ 2021 թվականի հոկտեմբերի 18-ից նոյեմբերի 02-ը ներառյալ, սակայն վերջինս 2021 թվականի նոյեմբերի 03-ին չի ներկայացել աշխատանքի և չի հայտնել չներկայանալու պատճառների մասին, ավելին՝ ըստ շրջանառվող լուրերի, գտնվել է ԱՄՆ-ում՝ տվյալ երկիր մեկնելու թույլտվության առերևույթ բացակայության պայմաններում:

Հարուցված կարգահապական վարույթի շրջանակներում կատարված ստուգումներով պարզվել է, որ դատախազն արձակուրդի ավարտից հետո չի ներկայացել աշխատանքի արդեն 6 օր շարունակ, չի կատարել դատախազի իր պարտականությունները՝ խոչընդոտելով ՀՀ դատախազության համակարգի կոնկրետ ստորաբաժանման գործառույթների պատշաճ իրականացմանը: Դատախազն այդպես էլ չի ներկայացրել և կատարվածի մասին բացատրություն չի տվել:

- Դատախազի արարքում առկա են արդյոք կարգապահական խախտման հատկանիշներ, թե՝ ոչ:

- Ի՞նչ տեսակի կարգապահական տույժ կարող է նշանակվել նրա նկատմամբ:

Իրավիճակային խնդրի օրինակ թիվ 3

Դատական նիստի ընթացքում կողմերից մեկի փաստաբանը բազմիցս տարբեր եղանակներով փորձել է դատավորին հունից հանել, ինչից հետո դատավորը բարձր ձայնով սաստել է նրան և ասել, որ տվյալ փաստաբանը իրավաբանության համար թյուրիմացություն է: Մյուս կողմի՝ ապահովագրական ընկերության ներկայացուցչին

դատավորը հայտնել է իր կարծիքն առ այն, որ ապահովագրական ոլորտը Հայաստանում չկայացած, իմաստազուրկ և կոռուպցիոն ռիսկեր պարունակող ոլորտ է: Այնուհետև, քանի որ դատական նիստը բավականին երկար է տևում, դատավորը սուրճ է խնդրում նիստերի քարտուղարից և, վերցնելով իր բջջային հեռախոսը, սկսում է զանգեր կատարել:

Դատական նիստի ավարտից հետո կողմի փաստաբանը մոտեցել է դատավորին, խնդրել է նրա հետ առանձին հանդիպում, որպեսզի բացատրի նիստի ընթացքում իր վարքագծի պատճառները: Դատավորը վերջինիս հրավիրել է իր աշխատասենյակ և, զրուցելով միմյանց հետ, պայմանավորվել են, որ նման դեպքերը հետագայում իսպառ կբացառվեն:

- Դատավորի արարքներում առկա են արդյոք կարգապահական խախտման հատկանիշներ, թե՝ ոչ:

4.3. Մեթոդական նյութեր, որոնք սահմանում են գնահատման ընթացակարգերը

4.3.1. Գիտելիքների ընթացիկ հսկողության ձևերը

Սեմինար պարապմունքները ներառում են տեսական և պրակտիկ հարցերի բանավոր քննարկում: Գնահատվում են ընկալման խորությունը, փաստարկելու կարողությունը, տերմինաբանությանը տիրապետելը:

4.3.2. Ատեստավորման ձևը (ստուգարք)

Ընթացիկ ստուգարքը անցկացվում է գրավոր ձևաչափով՝ մեկ իրավիճակային խնդիր: Կատարման ժամանակը 60 րոպե է: Ուսանողներին թույլատրվում է օգտագործել նորմատիվ ակտեր:

Վերջնական ստուգարքն անցկացվում է գրավոր ձևաչափով՝ մեկ իրավիճակային խնդիր: Կատարման ժամանակը 60 րոպե է: Ուսանողներին թույլատրվում է օգտագործել նորմատիվ ակտեր:

4.3.3. Գնահատման ընթացակարգը

Յուրաքանչյուր պատասխան գնահատվում է 0–100 միավոր սանդղակով՝ հետագա փոխարկմամբ 7-բալյա համակարգի: 88–100 միավորի դեպքում տրվում է A (գերազանց), 76–87-ի դեպքում՝ B (շատ լավ), 64–75-ի դեպքում՝ C (լավ), 52–63-ի դեպքում՝ D (բավարար), 40–51-ի դեպքում՝ E (բավարար սահմանային), 20–39-ի դեպքում՝ FX (անբավարար), իսկ 0–19-ի դեպքում՝ F (անբավարար):

4.3.4. Գնահատման չափանիշներ

Գնահատելիս հատկապես հաշվի են առնվում պատասխանի վերլուծական բնույթը (այլ ոչ թե սահմանումների պարզ թվարկումը), իրավական փաստարկման առկայությունը (ինչու է տվյալ մոտեցումը ճիշտ), կոնկրետությունը (հղումներ նորմատիվ ակտերին, դոկտրինալ դիրքորոշումներին, օրինակներին), ինչպես նաև կառուցվածքայնությունը

(ներածություն, հիմնական մաս, եզրակացություն յուրաքանչյուր ենթակետի համար):

4.3.5. Ուսանողների նախապատրաստման առաջարկություններ

Սեմինար պարապմունքների համար անհրաժեշտ է մշակել լրացուցիչ ուսումնական կամ դոկտրինալ աղբյուրներ յուրաքանչյուր թեմայի վերաբերյալ:

Իրավիճակային խնդիրը լուծելիս պետք է հաջորդաբար կիրառել հետևյալ սխեման. *փաստեր → իրավական խնդիր → նորմ/դոկտրին → փաստարկում → եզրակացություն:*

Ստուգարքի ժամանակ խորհուրդ է տրվում հստակ կառուցել պատասխանը՝ ներածություն, հիմնական մաս, եզրակացություն, ճիշտ օգտագործել իրավական տերմինաբանությունը, անհրաժեշտության դեպքում հղումներ կատարել ՀՀ Սահմանադրությանը և ՀՀ օրենքներին, ինչպես նաև հիմնավորել իր դիրքորոշումը՝ հղումներով դոկտրինալ մոտեցումներին:

Ստուգարք. Նպատակը՝ ստուգել ուսանողների գիտելիքները և պատրաստվածությունը ստացված գիտելիքների արդյունքում: